



Համալսարանական կրթության կանանց ասոցիացիա

ԿԱՆԱՆՑ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Համալսարանական կրթությամբ կանայք»
լրատուի հավելված

ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2012, №11

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ասոցիացիայի Արարարի, Լոռու, Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնները, որոնք գործում են 2005 թվականից, շարունակում են իրենց գործունեությունը՝ ուղղված հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների արմարավորմանը, մարզերի կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը:

Սպորե ներկայացնում են կենտրոնների անցկացրած մեկօրյա սեմինարները հասարակությանը հուզող հիմնախնդիրների շուրջ:



ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սպիտակում
անցկացված
«Կանանց քաղաքական մասնակցությունը որպես ՏԻՄ-երում զենդերային հավասարակշռության ապահովմանը նպաստող գործուն» սեմինարում, որին մասնակցում էին Ասոցիացիայի Սպիտակի մասնաճյուղի անդամներ, քաղաքի այլ ՀԿ-ների, քաղաքական կուսակցությունների և քաղաքապետարանի ներկայացուցիչներ, ներկայացվեցին «Քաղաքականություն և կանանց քաղաքական մասնակցություն» և «Քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության խոչընդոտներն ու ապահովման ուղիները» թեմաները:

Քննարկման միջոցով փորձ արվեց պարզելու մասնակիցների պատկերացումները քաղաքականություն հասկացության վերաբերյալ: Փաստվեց, որ հանրությունը, հատկապես՝ կանայք, իրենց ավելի շուտ և ավելի շատ տեսնում են սպառող օբյեկտների դերում և իրենց համարյա չեն համարում քաղաքականության սուբյեկտներ:

Այնուհետև սեմինարի մասնակիցներին հաղորդվեցին գիտելիքներ քաղաքականություն հասկացության մասին: Մասնակիցները նշեցին, որ մեր երկրի տնտեսության զարգացման ներկայիս ցածր մակարդակը նպաստում է ավտորիտար միտումների ուժեղացմանը և պայմաններ ստեղծում իշխանության կենտրոնացման համար: Նրանք նշեցին, որ քաղաքականությունը կապված է բարոյականության հետ և ցավով արձանագրեցին, որ այսօր առավել տարածված է «Նպատակին հասնելու համար բոլոր միջոցներն ընդունելի են» մոտեցումը, ավելին, այդ մոտեցումն ավելի կոշտ ու անբարո է դառնում, ինչն էլ հանգեցնում է հասարակության մեջ անհանդուրժողականության խորացման: Դրան նպաստում է նաև կանանց անբավարար մասնակցությունը քաղաքական գործընթացներին:

Քննարկելով քաղաքականության մեջ մտնելու մոտիվացիաները՝ ներկաները նշեցին, որ անհրաժեշտ է պայմաններ ստեղծել, որպեսզի երկու սեռն էլ հավասարապես քաղաքականություն մտնելու հնարավորություն ունենան:

Մասնակիցները, որպես կանանց քաղաքական մասնակցության խոչընդոտներ, առանձնացրին նրանց քաղաքական փորձի բացակայությունը,



հասարակության ոչ բարձր քաղաքական մշակույթը, ժողովրդավարական ինստիտուտների թուլությունը, մտածելակերպի առանձնահատկություններն ու

Հասարակության մեջ իրական և արդյունավետ փոփոխությունները հնարավոր են միայն ակտիվ քաղաքացիական մասնակցության շնորհիվ: Կենտրոնի աշխատանքները նպատակաուղղվել են քաղաքացիների ընդգրկմանը քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային ծրագրերի և նախագծերի քննարկումներին ու մշակումներին, իշխանական կառույցների կողմից ընդունվող որոշումների վրա հասարակության և քաղաքացիների ազդեցության հզորացմանը և ազգային, տարածաշրջանային ու համայնքային մակարդակներում դրանց կատարման վերահսկողության իրականացմանը:

Արմենուհի Կյուրեղյան

կարծրատիպերը, քաղաքական պայքարի քրեականացումը, կանանց շրջանում ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, կնոջ կրկնակի ծանրաբեռնվածությունը, կանանց նկատմամբ խտրականությունը, տղամարդկանց համեմատ անհավասար մեկնարկային պայմանները:

Անդրադառնալով քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության ապահովման ուղիներին՝

քնարկվեցին մի քանի միջազգային և ազգային հիմնարար փաստաթղթեր՝ ընդգծելով այդ փաստաթղթերից յուրաքանչյուրում նշված գենդերային քվոտայի անհրաժեշտությունը: Առանձնացվեցին այնպիսի միջոցներ, ինչպիսիք են օրենսդրության վերանայումը գենդերային զգայուն քաղաքականության տեսանկյունից, կուսակցությունների ֆինանսավորման լծակների օգտագործումը, կանանց և տղամարդկանց տվյալների բանկի ստեղծումը, գենդերային դասընթացների խրախուսումը ուսուցման բոլոր մակարդակներում, հատուկ քարոզարշավների անցկացումը քաղաքականության մեջ կանանց նկատմամբ նպաստավոր հասարակական կարծիք ձևավորելու համար, ՏԻՄ կառույցներում կանանց ներկայացվածության մակարդակի բարձրացմանը նպաստող օրենսդրական փոփոխությունների ընդունումը:

Մասնակիցները քննարկեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կանանց մասնակցության հարցերը: Նշվեց, որ կանանց մասնակցությունը ավագանու աշխատանքներին կնպաստի ողջ քաղաքի բնակչության հիմնախնդիրների առաջաջամանը, դրանց լուծման ուղիների որոնմանը:

Արմենուհի Կյուրեղյան

Ասոցիացիայի Լոռու քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադասող



ԱՌԱՆՑ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԷ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼ

Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղում անցկացվեց սեմինար «Կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը»

թեմայով, որին մասնակցեցին գյուղի դպրոցի ուսուցիչները՝ կանայք և տղամարդիկ, գյուղապետարանի աշխատակիցները:

Սեմինարի ընթացքում պարզաբանվեցին գենդերային հավասարությունը և դրա ապահովման մեխանիզմները, կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը:

Սեմինարի փորձագետ՝ Ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Կոտայքի մարզային կենտրոնի համադասող Անահիտ Ադոյանը ընդգծելով, որ գենդերային հավասարու-

յունը ենթադրում է ոչ թե սեռերի հավասարություն, այլ իրավունքների հավասարություն, նշեց, որ ներկայումս միջազգային ասպարեզում իրավունքների հավասարությանն ավելացել են նաև այլ կարևոր չափանիշներ՝ երկու սեռերի հավասար հնարավորությունները և իրավունքների ու հնարավորությունների հավասարությունից բխող հավասար արդյունքները:

Մասնակիցները խոստովանեցին, որ նախկինում երբեք գենդերային հավասարության հիմնախնդիրն չեն մոտեցել մման տեսանկյունից, որն ավելի հիմնավոր ու տրամաբանական է դարձնում գենդերային հավասարության ապահովումը:

Փորձագետն ընդգծեց, որ գենդերային հավասարությունը ոչ միայն հասարակության զարգացման գործոն է, այլև ժողովրդավարության կարևոր ցուցանիշ:

Ներկայացնելով գենդերային հավասարության ապահովումը՝ որպես զուգակշռված ժողովրդա-



վարության հիմնական հեռանկարներից մեկը, և դրա ապահովման մեխանիզմները, փորձագետ Անահիտ Աղոյանն ընդգծեց, որ գենդերային հավասարակշռության ապահովումը գենդերային հավասարության տրամաբանական շարունակությունն է և



գործնական արտահայտությունը: Գոյություն ունեն գենդերային հավասարակշռությունը բնութագրող բազմաթիվ ցուցանիշներ, ինչպիսին է, օրինակ՝ քաղաքական որոշումների ընդունման մակարդակում, օրենսդիր մարմնում, գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններում, ընտրովի ու նշանակովի այլ պաշտոններում կանանց ներգրավվածության տոկոսը:

Ներկայացվեցին նաև այն մեխանիզմները, որոնց միջոցով երկրները հաջողությունների են հասել այդ գործում. քվոտաներ, իշխանության կողմից քաղաքական կամքի դրսևորում, պետական մասշտաբով պատժամիջոցների կիրառում, քաղաքական նոր մշակույթի ձևավորում և այլն:

Անդրադառնալով *կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցությանը՝ Անահիտ Աղոյանը* ընդգծեց, որ առանց կանանց իրական քաղաքական մասնակցության և ներգրավվածության քաղաքացիական հասարակության կառույցներում՝ չի կարելի

փոփոխություններ ակնկալել, ժողովրդավարության և տնտեսության զարգացում ապահովել:

Բուռն քննարկման ընթացքում մասնակիցները նշեցին, որ քաղաքացիական մասնակցության արդյունավետության հարցում վճռորոշ նշանակություն ունի գրագետ լինելը: Եվ մեկնաբանելով կանանց քաղաքական մասնակցության անհրաժեշտությունը՝ նշեցին, որ իրենք դրա ամենօրյա վկան են, քանի որ իրենց գյուղապետը կին է, որը մշտապես իրենց կողքին է, բոլոր հարցերով դիմում են նրան և շատ գոհ են նրա աշխատանքից: Մասնակիցները միահամուռ կարծիք հայտնեցին, որ կին գյուղապետի շնորհիվ իրենց համայնքը շատ է տարբերվում մյուս համայնքներից, որովհետև իրենց գյուղապետը սրտացավ է, գործունյա, հոգատար և գյուղին վերաբերվում է ինչպես իր տանը:

Ասոցիացիայի Կոտայքի մարզի յուրաքանչյուր մասնաճյուղ դարձել է ինքնուրույն գործող սուբյեկտ: Որպես քաղաքացիական ակտիվության զգալի աճի արդյունք՝ հարկ է նշել նաև այն, որ յուրաքանչյուր մասնաճյուղ ինքն է հանդես բերում քաղաքացիական նախաձեռնություն և լուծումներ գտնում իր նախաձեռնություններն իրականացնելու համար:

Անահիտ Աղոյան

Մեմինարի ավարտին մասնակիցներն առաջարկեցին շարունակել համագործակցությունը՝ շեշտելով, որ Հայաստանի հզորությունը պայմանավորված է նաև գյուղական ուժեղ համայնքներով:

Անահիտ Աղոյան

Ասոցիացիայի Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադասող

Ոչ կառավարական կազմակերպությունները պետք է.

- վարեն կամ ծավալեն գործունեություն՝ ուղղված կանանց իրազեկմանն իրենց քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին,
- կազմակերպեն տարբեր ուսուցողական դասընթացներ կանանց և տղամարդկանց համար, որոնք քննարկեն քաղաքական և հասարակական կյանքում սեռերի հավասարակշռված ներկայացուցչության հիմնախնդիրը,
- մասնագետների ցանցեր և կազմակերպություններ ստեղծեն, որոնք իրենց գործունեությունն ուղղեն քաղաքական և հասարակական կյանքում սեռերի հավասարակշռված ներկայացուցչության հիմնախնդիր լուծմանը,
- ուսումնասիրեն տարբեր համակարգերի, կառույցների և քաղաքական միջոցների ազդեցությունը սեռերի դրոլթյան վրա:

*«Չռչակագիր կանանց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին»
(Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների 4-րդ եվրոպական խորհրդաժողով, Ստամբուլ, 13-14 նոյեմբերի, 1997 թ.)*



ԿԱՆԱՆՑ ԼԻՂԵՐՈՒԹՅԱՆ ԳՊՐՈՑ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

2002 թ. ընտրվել եմ Արարատի մարզի Ոստան համայնքի ավագանու անդամ: Որոշեցի այս տարի նորից առաջադրվել:

Մասնակցել եմ Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի կազմակերպած կանանց լիդերության դպրոցի եռօրյա դասընթացին և մեծ բավականություն ստացել:

Դպրոցի արդյունքները համայնքի բնակիչների հետ քննարկելուց հետո 2 կին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում որպես ավագանու անդամի թեկնածու առաջադրվելու ցանկություն հայտնեց: 3 կին թեկնածուների առկայության պայմաններում կատեղծվի կանանց թիմ, և բացի մեզ վերաբերող ընդհանուր հարցերից, կզբաղվենք բնակիչների սոցիալական հարցերով:

Դպրոցի ընթացքում առանձնահատուկ տպավորություն թողեցին Գեղեցիկ Գրիգորյանի և Հովհաննես Հովհաննիսյանի պարապմունքները:

Շնորհակալություն եմ հայտնում Ասոցիացիայի Արարատի մասնաճյուղին և Ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Արարատի մարզային կենտրոնին, որոնց նախաձեռնությամբ էր կազմակերպվել այդ դպրոցը:

Նման դասընթացները հնարավորություն են տալիս էլ ավելի խորացնելու մեր գիտելիքները և միավորելու կանանց:

**Արարատի մարզի
Ոստան համայնք
Շողիկ Ալոյան**

2012 թ. հուլիսի 10-12-ը Արտաշատում անցկացվեց կանանց լիդերության դպրոց «Կանայք և համայնքային ժողովրդավարությունը» խորագրով: Եռօրյա ուսուցման ծրագրով կազմակերպված պարապմունքներին մասնակցում էին կանայք Արտաշատից, Արարատից և Արտաշատի ենթաշրջանի գյուղերից՝ մարզպետարանի, Արտաշատի քաղաքապետարանի, գյուղապետարանների աշխատակիցներ, մանկավարժներ, բժիշկներ: Նրանք ներկայացնում էին Հայաստանի հանրապետական, «Բարգավաճ Հայաստան» և «Օրինաց երկիր» կուսակցությունները, ինչպես նաև Արտաշատում գործող հասարակական կազմակերպությունները: Մեմինարի մասնակիցների թվում էին նաև ավագանու ներկայիս կամ նախկին անդամներ:

Դպրոցի նպատակն էր կանանց իրավական ու քաղաքական գիտելիքների մակարդակի բարձրացման, ընտրարշավի արդյունավետ կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների զարգացման միջոցով խթանել նրանց ակտիվ մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների և կանանց քաղաքական մասնակցությանը նվիրված պարապմունքներին փորձագետ *Լիլիթ Չաքարյանը*, ներկայացնելով քաղաքացիական հասարակության հիմնական ինստիտուտների գործառույթներն ու փոխհարաբերությունները, կանանց քաղաքական մասնակցության առանձնահատկությունները, և մասնակիցները խմբային աշխատանքի ընթացքում վեր հանեցին կանանց ակտիվ քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոնները և նշեցին դրանք հաղթահարելու ուղիները:

Այնուհետև *Լիլիթ Չաքարյանը* մասնակիցներին ծանոթացրեց ընտրարշավի կազմակերպման ընդհանուր սկզբունքներին և փուլերին, ընտրազանգվածի ուսումնասիրման մեթոդներին, մանրամասն ներկայացրեց ընտրարշավի պլանավորման, կազմակերպման և անցկացման խնդիրները, բանավեճ վարելու մարտավարությունը, ՉԼՄ-ների հետ աշխատանքի ձևերը:

Դպրոցի երկրորդ օրը նվիրված էր տեղական ինքնակառավարման մարմինների՝ որպես համայնքային ժողովրդավարության ինստիտուտի գործառույթներին և խնդիրներին, դրանց ընտրությունների առանձնահատկություններին:

Փորձագետ *Գեղեցիկ Գրիգորյանն* իր պարապմունքները վարեց ակտիվ երկխոսության ձևաչափով՝ ներկայացնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ընտրական օրենսգրքի հիմնական դրույթները: Ուշադրություն դարձվեց հատկապես «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում ընթացիկ տարվա ապրիլին կատարված փոփոխություններին, որոնց, ինչպես պարզվեց քննարկման ընթացքում, մասնակիցների մեծ մասը ծանոթ չէր:

Փորձագետ *Հարություն Մարգարյանյանը* «Մարդկային զարգացման հիմնախնդիրները համայնքներում» պարապմունքի սկզբում

պարզաբանեց, որ համաձայն XX դարի վերջին տասնամյակում ձևավորված նոր տեսության՝ «մարդկային զարգացում» նշանակում է կայուն, համաչափ զարգացում հանուն մարդու և մարդու միջոցով, որը ենթադր



րում է մտածողության զարգացում, կենսամակարդակի բարձրացում, մարդու հնարավորությունների ընդլայնում, այսինքն՝ մարդու ներուժի զարգացում: Մասնակիցների հետ երկխոսության ընթացքում բացահայտվեցին Արարատի մարզի համայնքներում առկա հիմնախնդիրները մարդկային զարգացման տեսանկյունից, և քննարկվեց տեղական ինքնակառավարման մարմինների դերը համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ապահովման, համայնքի զարգացման գործընթացներին կանանց ակտիվ մասնակցության նախադրյալների ստեղծման գործում:

Դպրոցի երրորդ օրն սկսվեց «Լիդերություն. տիպերը և առանձնահատկությունները: Լիդերության զարգացումը՝ որպես կանանց քաղաքական մասնակցության խթանման գործոն» պարապմունքով, որի ընթացքում մտազրոհի շնորհիվ մասնակիցները լիդերին որակեցին որպես գիտակ, բազմակողմանի զարգացած և կազմակերպչական ունակություններով օժտված անձնավորության, որը կարող է միավորել մարդկանց որոշակի գաղափարի շուրջ և տանել նրանց իր հետևից: Փորձագետ *Անահիտ Աղոյանը* հավելեց համախմբված թիմ ստեղծելու և դրա յուրաքանչյուր անդամի կարողությունները ճիշտ գնահատելու և օգտագործելու հմտությունները, իր վրա ավելի մեծ պատասխանատվություն վերցնելու պատրաստակամությունը և առանձնապես շեշտեց, որ լիդերությունը ենթադրում է հորիզոնական կապեր ու հավասարություն ամեն ինչում:

Ակտիվ երկխոսության ձևաչափով անցկացված «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կանանց մասնակցության կազմակերպման արդյունավետ տեխնոլոգիաները» պարապմունքը, որի ընթացքում փորձագետ *Անահիտ Աղոյանը* նշեց. «Քանի դեռ հայ հասարակությունում պահպանվում են ընտրություններում կանանց՝ որպես թեկնածուի մասնակցությունը խոչընդոտող գենդերային կարծրատիպերը, կանայք թե՛ Ազգային ժողովի և թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում առաջադրվելիս պետք է իրենց ընտրարշավը կազմակերպեն ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, գտնեն ընտրազանգվածի հետ աշխատանքի այնպիսի ձևեր, որոնք շահեկանորեն կառանձնացնեն իրենց տղամարդ թեկնածուների շարքում»:

«Հանրային կառավարման և կանանց մասնակցության առանձնահատկությունները» պարապմունքի ընթացքում փորձագետ *Հովհաննես Հովհաննիսյանը* ներկայացրեց ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ «Կովկաս» հասարակագիտական կենտրոն» ՀԿ-ի՝ Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքին կանանց և տղամարդկանց մասնակցության հետազոտության արդյունքները՝ ընդգծելով, որ շարժընթացի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել բացահայտելու սոցիալական, տնտեսական, քաղաքական, կրթական, բարոյա-հոգեբանական այն գործոնները, որոնք նպաստում են այդ գործընթացներին կանանց լիարժեք մասնակցությանը կամ խոչընդոտում այն:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին նախապատրաստվող կանանց համար կազմակերպված լիդերության դպրոցի եռօրյա պարապմունքների արդյունքները ցույց տվեցին ընտրված ձևաչափի արդյունավետությունը և ծրագրում ընդգրկված թեմաների հիմնավորվածությունը:

Ընտրությունների կազմակերպման հիմնախնդիրներին նվիրված պարապմունքները, տարբեր մակարդակի ընտրություններում մասնակցության փորձի ներկայացումը օգնեցին կանանց ձեռք բերելու ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև ընտրարշավի ճիշտ պլանավորման, արդյունավետ կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի կողմից պարբերաբար կազմակերպված դասընթացներն օգնում են մեզ ձեռք բերելու նոր գիտելիքներ և փորձ, որոնք կօգնեն առաջիկա տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում նախապատրաստվելիս:

Դասընթացը մեծ ոգևորություն առաջացրեց մասնակից կանանց և աղջիկների շրջանում: Կարծում են, որ առաջիկա տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կավելանա ավագանու անդամի կանանց թեկնածուների թիվը: 2005-ից Դալար համայնքի ավագանու միակ կին անդամն են: Մեպտեմբերի 9-ին կազմակերպվող ընտրություններին նորից առաջադրելու են իմ թեկնածությունը և կփորձեն իմ ստացած գիտելիքներն ու փորձը փոխանցել մյուսներին:

Արարատի մարզի
Դալար համայնք
Մարիամ Ղադիյան

Գայանե Մերյան
Ասոցիացիայի կրթական ծրագրի համադասող



ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Այս տարվա հուլիսին Արտաշատ քաղաքում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից կազմակերպվեց կանանց լիդերության դպրոցի եռօրյա դասընթաց, որի նպատակն էր՝ ՏԻՄ ընտրություններին մասնակցելու համար պատրաստել նախաճեռնություն ցուցաբերած կանանց:

Դասընթացն ուսանելի փորձի փոխանակման գործընթաց էր:

2008 թ. ՏԻՄ ընտրություններին մասնակցել են առաջին անգամ և ընտրվել:

Ինձ համար հեշտ չի եղել այս որոշումը՝ կայացնել, սակայն միշտ զգացել եմ հարազատներին, ընկերներին, ընտանիքին և կուսակցության աջակցությունը:

Հաջողության հասնելու համար կինը պետք է համապատասխանի հասարակության սպասումներին: Քննարկումների ընթացքում եկա այն եզրակացության, որ քաղաքականության մեջ հաջողության հասնելու նախապայմաններից մեկն այն է, որ կնոջը պետք է ճանաչեն, թույլ տան, առաջ տանեն միայն տղամարդիկ, կնոջը մնում է ապացուցել, որ ինքը դրան արժանի է:

Ինձ օգնող հանգամանքներից էր այն, որ երկար տարիներ եղել եմ շրջավտի գործկոմի մշակույթի բաժնի աշխատակից, ինչպես նաև աշխատել եմ մարզպետարանում, ինչի շնորհիվ ինձ շատ մարդիկ են ճանաչել:

Քաղաքային համայնքներում կանանց «տեսանելի» դառնալու խնդիրն ավելի բարդ է, այստեղ միայն աշխատանքը բավական չէ, անհրաժեշտ է նաև կուսակցական և հասարակական ակտիվություն:

Կնոջ դերը հասարակության մեջ կախված է նրա քաղաքացիական ակտիվությունից, այն հանգամանքից, թե որքանով է կինը պատասխանատու իր շրջապատի նկատմամբ, որքանով է գիտակցում հասարակական կյանքում տեղի ունեցող տևտեսական, քաղաքական և այլ փոփոխությունները և, վերջապես, որքանով ճիշտ վճիռներ կայացնելու, սեփական տեսակետը հստակ ձևակերպելու փորձ և ճկունություն ունի:

Ոչ ոք չի կարող մեզ տալ այն ազատությունը, որը պետք է մեր մեջ լիներ:

Ով պայքարում է հաղթելու համար, պետք է պատրաստ լինի պարտության:

Հերիքնագ Նազարյան

Արտաշատ քաղաքի ավագանու անդամ,

Արտաշատում եվրոպական քոլեջի տնօրեն,

«Օրինաց երկիր» կուսակցության Արտաշատի տարածքային կազմակերպության համակարգող քարտուղար

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

«Կանանց քաղաքական մասնակցություն և քաղաքացիական նախաձեռնություններ. գեներալային հավասարությանը հասնելու հեռանկարները Հայաստանում» ծրագրի շրջանակներում Ասոցիացիան արեղծել է «Գործողությունների քաղաքականություն» հասարակական-րեղեկարվական և «Կանանց ալյանս» էլեկտրոնային կապի կենտրոնները, որոնց նպատակն է Ասոցիացիայի մասնաճյուղերի միջև րեղեկարվության և աշխատանքի փորձի փոխանակումը, ինչպես նաև հասարակական գործընթացների զարգացմանը, կանանց իրավունքների պաշտպանությանը և գեներալային հավասարության աջակցմանը նպաստող քաղաքացիական նախաձեռնությունները, նպաստումը սոցիալապես ակտիվ կանանց քաղաքական-իրավական գիտելիքների բարձրացմանը, րեղական ինքնակառավարման մարմինների ընդգրկումը կանանց րեղեկարվական-կրթական աջակցումը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Տեղեկատվական հասարակության յուրահատուկ բնութագրիչներն են տեղեկատվական տեխնոլոգիաները և համաշխարհային տեղեկատվական տարածության ստեղծումը, որոնք ապահովում են մարդկանց արդյունավետ տեղեկատվական փոխգործակցությունը, նրանց համար համաշխարհային տեղեկատվական պաշարների մատչելիությունը, տեղեկատվական ծառայությունների պա-

հանջմունքների բավարարումը, ինչպես նաև ժողովրդավարության և էլեկտրոնային սոցիալական ցանցերի զարգացումը:

Ներկա փուլում, երբ տեղեկատվությունը և գիտելիքները դառնում են տեղեկատվական հասարակության գլխավոր արտադրանքը, քաղաքացիական հասարակության և նրա ինստիտուտների զարգացումը, հասարակական գործունեությունը գործնականում



անհնար է առանց օպերատիվ և լայնածավալ տեղեկատվության համակարգի:

Ասոցիացիայի հետագա ինստիտուցիոնալ զարգացման խնդիրն անհրաժեշտ է դարձնում նոր տեխնոլոգիաներ և կապեր ներդնելը՝ որպես ժամանակակից պայմաններում հասարակական աշխատանքի կազմակերպման գործիքներ:

Ասոցիացիայի կողմից ստեղծված «Գործողությունների քաղաքականություն» հասարակական-տեղեկատվական և «Կանանց ալյանս» էլեկտրոնային կապի կենտրոնները նպատակ ունեն կատարելագործել տեղեկատվական աշխատանքը, մոտեցնել այն պրակտիկ գործունեությանը, բարձրացնել իրազեկությունը և զարգացնել տեղեկատվական մշակույթը՝ Ասոցիացիայի և նրա մասնաճյուղերի գործունեության պրոֆեսիոնալիզմի և արդյունավետության բարձրացման համար, ինչպես նաև ապահովել փորձի կանոնավոր փոխանակումը Ասոցիացիայի մասնաճյուղերի միջև, իսկ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ նախագահի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների փուլում՝ նաև «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կազմակերպությունների հետ:

Կենտրոնների գործունեությունն ուղղված է տեղեկատվության փոխանակմանը Ասոցիացիայի վարչության, մասնաճյուղերի և քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնների միջև, կապերի հաստատմանը այլ հասարակական կազմակեր-

պությունների, դրանց կին լիդերների և քաղաքական կուսակցությունների կանանց հետ, ինչպես նաև՝ առցանց քննարկումների և խորհրդատուական անցկացմանը:

«Գործողությունների քաղաքականություն» հասարակական տեղեկատվական և «Կանանց ալյանս» էլեկտրոնային կապի կենտրոնները հնարավորություն կտան Ասոցիացիայի, այլ հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների կին լիդերներին օպերատիվ արձագանքելու հասարակության կյանքում և աշխարհում կատարվող կարևորագույն իրադարձություններին և տեղեկատվություն տարածելու Երևանում ու մարզերում կանանց նախաձեռնությունների մասին, բացի այդ, հնարավոր կդարձնի էլեկտրոնային ցանցերի ավելի լայն օգտագործումը, հնարավորինս շատ տեղեկատվության յուրացումը Ասոցիացիայի առջև ծառայած բազմաթիվ հիմնախնդիրներին հավաքական լուծում տալու համար:

Ցանցը նպաստելու է Ասոցիացիայի և այլ հասարակական կազմակերպությունների ջանքերի համախմբմանը պետական գեներային քաղաքականության իրականացման, գեներային հավասարության հասնելու համար օրենսդրական փոփոխությունների առաջնման, գեներային կարծրատիպերի հաղթահարման և ժողովրդավարության մշակույթի ու սեռերի միջև գործընկերության ձևավորման նպատակով:

ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒԼԵՐԸ ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ

◆ Սևանում ևս մեկ ծրագիր դարձավ իրողություն՝ «Սևանի համայնքի երիտասարդության քաղաքացիական ակտիվության բարձրացում»: Եռամսյա ծրագիրը ֆինանսավորվել է ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության կողմից:

«Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում անցկացվեցին մի շարք միջոցառումներ՝ հանդիպումներ երիտասարդների հետ, նրանց կողմից բարձրացված հիմնախնդիրների ու առաջարկների ժողովում և տեսակավորում, երիտասարդական ակտիվ խմբի ստեղծում, դասընթացների կազմակերպում առաջնորդական և կառավարման հմտությունների զարգացման համար:

Ծրագիրն ամփոփվեց հուլիսին «Սևանի համայնքի երիտասարդական քաղաքականությունը՝ որպես համայնքում երիտասարդների մասնակցության վարքի ապահովման երաշխիք» ֆորումով, որին մասնակցում էին քաղաքապետարանի պատասխանատուները, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի, «Սևան երիտասարդական ակումբ» ՀԿ-ի ներկայացուցիչները, փորձագետներ:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի փոխնախագահ Արմինե Գուկասյանը ներկայացրեց իրենց կազմակերպության փորձը քաղաքացիական ակտիվության և քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման ոլորտում և շեշտեց լիդերության դպրոցի դերը առաջնորդական հմտությունների ձևավորման գործում:

2008 թ. մշակված Երիտասարդական քաղաքականության ծրագրի իրականացման գործողությունների ցանկը լրացվեց Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի կողմից: Հաշվի առնելով երիտասարդների ցանկություն-առաջարկը՝ առաջիկայում համալսարանականների կողմից կանցկացվեն լիդերության դպրոցի հերթական հոսքի պարապմունքները, որոնց կմասնակցեն և՛ աղջիկները, և՛ տղաները:

Սա լուրջ և բեկումնային ձեռնարկ է, որի շուրջ միավորվելու են Սևանում գործող հասարակական կազմակերպությունները:



◆ Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալազգիայի Արթիկի մասնաճյուղում 2012 թ. հուլիսին անցկացվեց կյոթ սեղան «Կանանց ներգրավվածությունը 2012 թ. սեպտեմբերի 9-ի ՏԻՄ ընտրություններում» թեմայով:

Հանդիպմանը մասնակցում էին Ասոցիացիայի Արթիկի մասնաճյուղում ընդգրկված գրեթե բոլոր անդամները և հրավիրվածներ դպրոցներից, մախակրթարաններից, գրադարաններից: Հրավիրված էր նաև Արթիկի «Տուֆաշխարհ» թերթի գլխավոր խմբագիրը:

Ասոցիացիայի Արթիկի մասնաճյուղի նախագահ Սուսաննա Տոնոյանը ներկայացրեց 2012 թ. սեպտեմբերի 9-ին կայանալիք ՏԻՄ ընտրություններում Կանանց ներգրավվածության հետ կապված խոչընդոտները: Արթիկի ընտրությունների ժամանակ ավագանու թեկնածու է առաջադրվելու Ասոցիացիայի անդամ, Արթիկի սոցիալական ծառայության առաջատար մասնագետ Աննա Խաչատրյանը:

Փորձագետը՝ Ասոցիացիայի անդամ, բժշկական քոլեջի իրավունքի դասախոս Վարդուշ Բոթոյանը ներկայացրեց Արթիկում գոյություն ունեցող այն կարծրատիպերը, որոնք խանգարում են կանանց մասնակցելու ՏԻՄ ընտրություններին:

Ելույթ ունեցավ նաև Արթիկի թիվ 1 հիմնական դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի Ա. Սահակյանը, որը բավական հետաքրքիր ներկայացրեց իր տեսակետը հայ կնոջ, արթիկցի կնոջ հայացքների և պատկերացումների վերաբերյալ: Ըստ նրա՝ կանայք պետք է ավելի ակտիվ հանդես գան երկրի քաղաքական գործընթացներում:

Հանդես եկան նաև թիվ 3 մուր-մանկապարտեզի դաստիարակչուհի Սուսաննա Սոնոյանը, «Տուֆաշխարհ» թերթի խմբագիր Անահիտ Նահապետյանը:

◆ Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալազգիայի Մարալիկի մասնաճյուղում 2012 թ. հուլիսի 14-ին տեղի ունեցավ կյոթ սեղան - քննարկում՝ «Հետընտրական արդյունքների ամփոփ նկարագրի մասին տեղեկատվություն, և ինչպես օգնեցին չառաջադրված ընտրող կանայք առաջադրված կանանց» թեմայով:

Կյոթ սեղանին մասնակցում էին քաղաքի ակտիվ, կուսակցական կանայք, ընտրական հանձնաժողովներ ներկայացնող կանայք և Ասոցիացիայի անդամներ:

Քննարկման ժամանակ Մարալիկի մասնաճյուղի նախագահ Ռուզաննա Հարությունյանը մասնակիցներին տրամադրեց ընտրության արդյունքների ամփոփ նկարագիրը՝ նշելով, որ արդյունքում ունեն 14 կին պատգամավոր, թեև դա սպասվածից զգալիորեն քիչ է:

Մարալիկի մասնաճյուղի փոխնախագահ Գայանե Մելքոնյանն իր խոսքում նշեց, որ ցածր արդյունքի հիմնական պատճառը կանանց աջակցության օրենքով նախատեսված մեխանիզմների չգործելն էր:

«Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչ Լուսինե Գրիգորյանն էլ իր խոսքում նշեց, որ ցածր արդյունքի պատճառ է համարում է նաև ներկուսակցական նկատառումներով արված տեղափոխություններն ու ինքնաբացարկները:

«Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի հավելվածը տպագրվում է «Կանանց քաղաքական մասնակցություն և քաղաքացիական նախաձեռնություններ. զենդերային հավասարությանը հասնելու հեռանկարները Հայաստանում» ծրագրի շրջանակներում «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի աջակցությամբ:

Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալազգիան երախարագիություն է հայտնում հեղինակներին հոդվածները տրամադրելու համար:

Համարը պատրաստել են **Իրինա Շահինյանը, Անահիտ Հարությունյանը**
Համարը խմբագրել է **Անահիտ Հարությունյանը**
Ձևավորումը՝ **Անուշ Մեսրոպյանի**

Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալազգիա
Երևան 0002, Մարյան 22,
Հեռ. (374 10) 53 68 02
Ֆաքս (374 10) 53 67 92
Էլ. փոստ՝ awuc.armenia@gmail.com

Տպագրված է «ԱՍՈԳԻԿ»
հրատարակչության տպարանում
Երևան 0001,
Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am